Հավելված N 1
Կապան համայնքի ղեկավարի
2024 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 1793-Ա որոշման

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքը հայտարարում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթ՝ հետևյալ թափուր ավտոբուսային (միկրոավտոբուսային) երթուղիների համար՝

NN ը/կ	ԵՐԹՈՒՂՈՒ			
	անվանումը և համարը	սկզբնակետը	վերջնակետը	սպասարկման համար պահանջվող հիմնական և պահուստային ավտոբուսների քանակը
1.	Թիվ 1	Դավիթ Բեկ հրապարակ	Կավարտ թաղամաս	2
2.	Թիվ 2	Մ.Հարությունյան փողոց	Գ.Նժդեհի հուշահամալիր	2
	Թիվ 3	Համայնքապետարանի հարակից այգի	Վաչագան թաղամաս	1
	Թիվ 5	Սյունիք բնակավայրի կենտրոնական կանգառ	Բաղաբերդ թաղամաս	3
	Թիվ 8	Չարենցի փողոց	Շինարարների փողոց	2
3.	Թիվ 15	Գ.Նժդեհի հուշահամալիր	Բաղաբերդ թաղամաս	2

ՑԱՆԿ

ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայտ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ա որոշման N2 ձևի:

2.* Ավտոբուսների գրանցման վկայագրեր (ժամանակավոր կտրոն):

3.*Ավտոբուսի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքի առկայությունը հավաստող փաստաթուղթ:

4.* Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ:

5. Հավաքակայանի սեփականության կամ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթեր,գիշերակացով երթուղիների դեպքում վերջնակետում ավտոբուսների կայանումը, պահպանումը, նախաուղերթային տեխնիկական զննումը և վարորդների բուժզննումն ապահովելու նպատակով կնքված պայմանագրեր:

6. Ավտոկայարանային ծառայություն մատուցող կազմակերպության հետ կնքված սպասարկման նախնական, իսկ ներհամայնքային փոխադրումների դեպքում երթակարգավարական ծառայություններ մատուցող կազմակերպության հետ կնքված ծառայություններ մատուցելու նախնական պայմանագիր (գործող պայմանագրի առկայության դեպքում նախնական պայմանագիր չի պահանջվում):

7. Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևոր և ուղեբեռ (եթե սահմանված է) փոխադրավարձը, իսկ միջմարզային և ներմարզային երթուղիների համար՝ նաև ըստ նախատեսված միջանկյալ կանգառների (սույն պահանջը չի վերաբերում համայնքներում անցկացվող մրցույթներին):

Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կողմից սոսնձված և ստորագրված փաթեթով:

Չի ներկայացվում հայտ-պարտավորագիր ներկայացնելու դեպքում:

Մրցույթի անցկացման օրը՝ 2025 թվականի մարտի 12-ին ժամը՝ 11:00-ին, ՀՀ Սյունիքի մարզ ք.Կապան, Չարենցի 1, Մշակույթի կենտրոն, 2-րդ հարկ, 2/2 սենյակ:

Փաթեթների բացման օրը՝ 2025 թվականի մարտի 5-ը, ժամը 11:00-ին՝ ՀՀ Սյունիքի մարզ ք.Կապան, Չարենցի 1, Մշակույթի կենտրոն, 2-րդ հարկ, 2/2 սենյակ:

Հայտերն ընդունվում են ՀՀ Սյունիքի մարզ ք.Կապան, Չարենցի 1, Մշակույթի կենտրոն, 2-րդ հարկ, 5/17 սենյակում, ամեն օր՝ ժամը 9 :00 – 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետն է՝ 2025 թվականի մարտի 4-ը ժամը 18:00-ն:

Շվացուցակներին ծանոթանալու համար անցնել հետևյալ հղումներով՝

https://kapan.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=1030
https://kapan.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=1031
https://kapan.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=1032
https://kapan.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=1033
https://kapan.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=1034
https://kapan.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=1035

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ +374 060 720072 և 060 720074 հեռախոսահամարներով:

Մրցութային հանձնաժողովի նախագահ Գոռ Թադևոսյան